ՏԵՂԵԿԱՆՔ
ԳՈՐԾՈՂ ՕՐԵՆՔԻ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ «ԱԶԱՏ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՏԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ»

Հոդված 14. Ազատ տնտեսական գոտում սահմանափակումները

1. Ազատ տնտեսական գոտում չի թույլատրվում հետևյալ գործունեության տեսակների իրականացումը.

1) ռադիոակտիվ նյութերի արտադրություն և առևտուր.

2) զենքի, ~~զինամթերքի~~ ռազմական նշանակության արտադրանքի և պայթուցիկ նյութերի արտադրություն ու առևտուր.

3) առանց Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տրված թույլտվության թմրամիջոցների և հոգեմետ նյութերի ներմուծում, պահպանում, արտադրություն և առևտուր:

2. Ազատ տնտեսական գոտու այն տարածքում, որտեղ կիրառվում է «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգը, հսկիչ անցագրային ռեժիմի ապահովումը, ներառյալ՝ այդ տարածք անձանց մուտքի կարգի սահմանումը, իրականացվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան: